ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/41 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	«10 ՏԱՐԻ ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» Կրծքանշանն ունի ուռուցիկ վահանի տեսք: Այն պատրաստվում է արույրից: Կրծքանշանի չափերն են՝ 45 մմ x 30 մմ x 2 մմ: Վահանն ունի 1,5 մմ հաստություն, վրան արտացոլված է եզրագիծ, թուր՝ վահանի կենտրոնում ամբողջ երկայնքով, որը վահանի վերին եզրից դուրս է գալիս 3 մմ չափի հավերժության նշանով, Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ 0,5 մմ հաստությամբ, վերին կենտրոնական մասում, որից ներքև պատկերվում է Հայաստանի Հանրապետության դրոշը՝ 0,5 մմ հաստությամբ և կշեռք՝ 0,5 մմ հաստությամբ: Կշեռքի հիմքը սկսվում է կրծքանշանի վերին եզրից, իսկ թևերը տարածվում են վահանի կենտրոնական մասում և դուրս գալիս եզրագծերից 3 մմ չափով՝ յուրաքանչյուր կողմից: Կրծքանշանի վրա պատկերված թուրը սպիտակ գույնի է, Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ ոսկեգույն, դրոշը՝ եռագույն և կշեռքը՝ սպիտակ, եզրագիծը՝ բաց դեղնագույն: Վահանն ունի կանաչ գույն վերին եզրագծերի անկյունային թեքությունների վրա սև գույնով գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», և «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը: Թրի աջ և ձախ մասերում մեկական նիշերով գրված է «10» թիվը: Կրծքանշանի հակառակ երեսին փորագրվում է կրծքանշանի հերթական համարը: Կրծքանշանը հետին մասում ունի հագուստին ամրացնելու հարմարանք: Ընդհանուր քանակի մեջ 40-հատ: «15 ՏԱՐԻ ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» Կրծքանշանն իր ձևով նման է «10 ՏԱՐԻ ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» կրծքանշանի ձևին, բացառությամբ կրծքանշանի վրա պատկերված վահանի գույնի և թվանշանի: «15 ՏԱՐԻ ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» կրծքանշանն ունի կապույտ գույն, իսկ թրի աջ և ձախ մասերում մեկական նիշերով գրված է «15» թիվը: Ընդհանուր

	քանակի մեջ 30-հատ: «20 ՏԱՐԻ ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» Կրծքանշանն իր ձևով նման է «10 ՏԱՐԻ ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» կրծքանշանի ձևին, բացառությամբ կրծքանշանի վրա պատկերված վահանի գույնի և թվանշանի: «20 ՏԱՐԻ ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» կրծքանշանն ունի կարմիր /красный/ գույն, իսկ թրի աջ և ձախ մասերում մեկական նիշերով գրված է «20» թիվը: Ընդհանուր քանակի մեջ 10-հատ: Կրծքանշանների և վկայականների նկարագրերը համաձայն՝ ՀՀ փոխվարչապետի 11.09.2020թ.-ի թիվ 555-Լ որոշման հավելվածներ՝ 5-ի, 6-ի, 7-ի: Յուրաքանչյուր կրծքանշանը պետք է դրված լինի թավշապատ, տեղակայելու հարթակով համապատասխան չափի տուփի մեջ և իր հետ ունենա վկայական: Տուփերի ձևերը նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/41 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	